



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՐԹՅԱՆ ՄԻԶՈՇՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսեւորումները բացառելու եւ հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը սույն ուղեցույցը մշակել է նկատի ունենալով
Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների ԿԱՆՈՆԱԳՐԻ 5-
րդ գլխի հետեւյալ պահանջները.

«5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր
են՝

5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային,
սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության,
սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական
կարգավիճակի պատճառով,

5.2. որեւէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն,
քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն,
բացառել ատելության խոսքը»:

ԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանի լրատվամիջոցներում խտրական, նախապաշարված, հաճախ էլ կողմնակալ լուսաբանումը հատկապես դրսևորվում է կրոնական, սեռական կողմնորոշման, քաղաքական հայացքների, մասամբ՝ սոցիալական կարգավիճակի, սեռային, տարիքային հայտանիշներով:

Հայ առաքելական եկեղեցու առանձին սպասավորներ (հոգևորականներ) իրենց հրապարակային ելույթներում անհանդուրժողականություն, երբեմն նաև թշնամանք են ցուցաբերում այլ կրոնական համայնքների նկատմամբ, ինչը տարածվում է լրատվամիջոցներով և նպաստում է այդ թշնամանքի եւ անհանդուրժողականության խորացմանը:

Հասարակության մոտ գենդերային խնդիրների ոչ միանշանակ ընկալումն իր ազդեցությունն է ունենում լրատվամիջոցների հրապարակումների վրա:

Քաղաքական ուժերի ազդեցության տակ գտնվող լրատվամիջոցներն անհանդուրժողականություն են դրսևորում միմյանց նկատմամբ՝ ոչ բարենպաստ լույսով ներկայացնելով հակառակ քաղաքական հայացքներ ունեցողներին ու նրանց գործողությունները:

Մտահոգում են նաև սոցիալական ցանցերում լրագրողների եւ լրատվամիջոցների մյուս ներկայացուցիչների հաճախ անհանդուրժողական գրառումները քաղաքական գործիչների, կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների ու սոցիալական խմբերի վերաբերյալ:

Սոցիալական տարբեր խոցելի խմբերին վերաբերող թեմաների լուսաբանումները հիմնականում խղճահարություն, երբեմն էլ արհամարհանք առաջացնելու համատեքստում են լինում, ինչը նույնպես խտրականության դրսևորման մի ձև է:

Լրատվամիջոցները քիչ են անդրադառնում նաև տարիքային, սեռային կամ այլ հայտանիշներով աշխատանքային խտրականության երևույթներին:

Հաշվի առնելով վերոգրյալները, նկատի ունենալով, որ մեդիան նաև հասարակությանը կրթելու, կարծրատիպերը ջարդելու եւ հանդուրժողականության միջազգային չափանիշներ արմատավորելու խնդիր ունի, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն առաջարկում է հետևյալ խորհուրդները:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ա. Փաստեր հավաքելու, տեղեկատվության աղբյուրների հետ հարաբերվելու և հարցազրույցներ վարելու վերաբերյալ

1. Եթե մարդիկ քաղաքական, կրոնական այլ հայացքներ, մաշկի այլ գույն, այլ սեռական կողմնորոշում կամ սոցիալական կարգավիճակ ունեն, ապա չի նշանակում, թե նրանք մեզանից վատն են կամ լավը: Նրանք պարզապես տարբեր են մեզանից, ուստի լրագրողներն ու լրատվամիջոցները նրանց եւ նրանց համայնքների, կազմակերպությունների, միավորումների հետ հարաբերություններում եւ նրանց վերաբերող լուսաբանումներում նույնպես պիտի առաջնորդվեն համընդհանուր էթիկական սկզբունքներով:
2. Կրոնական, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր խմբերի, քաղաքական այլ հայացքներ ունեցողների խնդիրներին վերաբերող թեմաներ արժարժեքի շատ կարեւոր են այդ խմբերի ներկայացուցիչների եւ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ հարցազրույցներն ու բոլորի դիրքորոշումները եւս հրապարակումներում ներկայացնելը: Խորհուրդ է տրվում մանրամասն քննարկել խնդիրներն այդ խմբերի կամ հասարակական կազմակերպությունների հետ:
3. Հարկ է հիշել, որ ցանկացած ազգային, կրոնական համայնք, սոցիալական խումբ, քաղաքական կազմակերպություն միայն արտաքուստ է միասնական, հնարավոր է լինեն մարդիկ, որոնք չեն կիսում համայնքի/կազմակերպության ղեկավարության տեսակետները: Աշխատեք ստանալ դրանք, բայց այդ տեսակետները ներկայացնելը մի գործածեք համայնքը/կազմակերպությունը վարկաբեկելու համար:
4. Նյութեր հավաքելիս հարկ է գնահատել բոլոր հնարավոր կանխակալ կարծիքները: Հիշեք, որ այս կամ այն խմբի մասին մի այլ խմբի կարծիքը մեծ մասամբ հիմնվում է ոչ թե փաստերի, այլ նախապաշարումների, կանխակալության եւ կարծրատիպերի վրա:
5. Ուրիշների սխալներից խուսափելու համար, ուսումնասիրեք նախկինում հրապարակված նյութերը եւ փորձեք վերլուծել ու պատկերացնել, թե դուք ինչպես կլուսաբանեիք նույն խնդիրը:
6. Հարցազրույց վարելիս եղեք նրբանկատ: Հիշեք, որ տարբեր սոցիալական խմբերի, կրոնական կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են խուսափել կամ խուճապի մատնվել լրագրողի հետ զրուցելիս: Խորհուրդ է տրվում զրույցը չսկսել նրանց հուզող խնդիրներից: Խոսեք ընտանիքի, կյանքի, նախասիրությունների մասին, լիցքաթափեք զրուցակցի լարվածությունը, վստահություն ձեռք բերեք, ապա անցեք բուն թեմային:
8. Որեւէ համայնքի կամ կազմակերպության անդամի հետ հարցազրույց վարելիս հիշեք, որ կյանքը չի սկսվում եւ չի ավարտվում դավանանքով, ազգային կամ քաղաքական խնդիրներով: Հետաքրքրվեք նրանց ապրուստով, հոգսերով, կարիքներով, աշխատանքով, մշակույթի, սպորտի մասին նրանց պատկերացումներով:

Բ. Նյութեր պատրաստելու եւ հրապարակելու վերաբերյալ

- 1.** Մի աղավաղեք ձեր գրուցակիցների տեսակետները, համատեքստից մի կտրեք նրանց մտքերը: Հիշեք, որ ցանկացած անզգույշ բառ կամ դարձվածք կարող է հանգեցնել վստահության կորստի եւ ընկալվել իբրեւ խտրականություն կամ հրահրել բախումներ ու վեճեր:
- 2.** Ուշադրություն դարձրեք այլ դավանանքի, ազգի ներկայացուցիչ, հայացքների տեր, սեռական կողմնորոշում, սոցիալական կարգավիճակ ունեցող մարդկանց բնորոշելու համար ձեր օգտագործած բառապաշարին: Հնարավոր է, որ որոշ բառեր դուք նսեմացուցիչ չհամարեք, սակայն դրանց կիրառումը վիրավորական թվա տվյալ խմբի անդամների համար: Ավելի լավ է իրենցից կամ նրանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներից ճշտել որոշ բառերի գործածությունը:
- 3.** Որեւէ համայնքի, կազմակերպության կամ խմբի մեկ կամ մի քանի անդամի վարքով մի դատեք ամբողջ համայնքի/կազմակերպության մասին: Ընդհանրացումներ մի արեք: «Բոլորը» չեն կարող միանման լինել, յուրաքանչյուր մարդ անհատականություն է:
- 4.** Անհարկի մի շեշտեք մարդու՝ կրոնական որեւէ համայնքի անդամ լինելը, ազգային պատկանելությունը, սեռական կողմնորոշումը, սոցիալական կարգավիճակը: Մարդու ազգային, կրոնական կամ այլ պատկանելությունը կարելի է նշել միայն այն դեպքում, երբ իրադարձությունը, փաստը կամ միջադեպը ունի կրոնական, ազգային, քաղաքական, սոցիալական հիմք:
- 5.** Խուսափեք մակդիրներ, բնորոշումներ, կարծրատիպեր օգտագործելուց:
- 6.** Սոցիալական տարբեր խմբերի (աղքատներ, հաշմանդամներ, մուրացիկներ եւ այլն) խնդիրները լուսաբանելիս մի փորձեք խղճահարություն առաջացնել: Սրտաճմլիկ բառերը միշտ չէ, որ դրական էֆեկտ են ունենում: Մի մոռացեք, որ նրանք էլ իրենց արժանապատվության զգացումն ունեն: Վերացեք կարծրատիպերից եւ կանխակալությունից: Հիշեք, որ այս խմբի մարդկանց կարելի է լուսանկարել եւ տեսանկարահանել միայն իրենց ցանկությամբ: Սակայն ցանկության առկայության դեպքում անգամ, նրանց բացատրեք նկարահանելու եւ դեմքերը ցուցադրելու հնարավոր հետեւանքները: Ճշտեք նաեւ, թե ինչպես իրենք կուզեն ներկայանալ, որպեսզի հանկարծ հրապարակման մեջ չվիրավորեք նրանց:
- 7.** Աշխատեք նյութի մեջ չտեղադրել այնպիսի լուսանկարներ, որոնք կձառայեն տվյալ խմբի վերաբերյալ կարծրատիպերի խորացմանը:
- 8.** Եթե որեւէ համայնքի, կազմակերպության, սոցիալական խմբի նկատմամբ խտրական վերաբերմունքը կամ անհանդուրժողականությունը դրսևորվել է հրապարակային ելույթում կամ գործողությամբ, ապա այն դարձրեք առանձին նյութի թեմա: Հանրային դեմքի կողմից հրապարակային խտրական վարքը հասարակական քննարկումների տեսակետից կարևոր է:

9. Այլ լրատվամիջոցների՝ խտրական վերաբերմունքի դրսևորումներով հրապարակումներն արտատպելիս աշխատեք ունենալ նաեւ դրան հակադրվող տեսակետները եւ նույնպես հրապարակել:

10. Ուշադրություն դարձրեք աշխատանքային խտրկանությանը: Շատերը գործազուրկ են հենց տարիքի, սեռի, արտաքինի, հաճախ էլ՝ սոցիալական կարգավիճակի կամ սեռական կողմնորոշման պատճառով:

11. Ձեռնպահ մնացեք սոցիալական ցանցերում քաղաքական գործիչների, կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների ու սոցիալական խմբերի վերաբերյալ ցանկացած տիպի խտրական ու անհանդուրժողական գրառումներ կատարելուց: Առաջնորդվեք Դիտորդ մարմնի ընդունած՝ [«Սոցիալական ցանցերում խմբագրությունների աշխատակիցների վարքի կանոնների վերաբերյալ» ուղեցույցով](#):

Ընդունվել է ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի

2017թ. մայիսի 17-ի նիստում:

[ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը](#) ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 44-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: